

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ



2019թ. հունիսի 22

Հարցազրույց Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ Արեգ Միքայելյանի հետ ՀԱԸ-ի 20-ամյակի առիթով:

✦ Ո՞րն էր Հայկական աստղագիտական ընկերության հիմնադրման գլխավոր նպատակը:

Հայկական աստղագիտական ընկերության (ՀԱԸ, միջազգային ասպարեզում հայտնի է անգլերեն անվանմամբ՝ Armenian Astronomical Society, ArAS) ստեղծման գլխավոր նպատակն էր միավորել հայազգի աստղագետներին: Դա կարող է բերել նոր համագործակցությունների, ավելի ակտիվ կապերի՝ ի նպաստ հայ աստղագիտության զարգացման:

ՀԱԸ-ը ստեղծվել է 1999թ-ին, սակայն պետական ռեզիստրի կողմից պաշտոնական գրանցում ստացել է 2001թ-ին: Ի դեպ ՀԱԸ-ի ստեղծման մասին դեռևս 1960-ական թթ. երազում էր Վիկտոր Համբարձումյանը: Լսել եմ, որ 1967թ-ին Պրահայում կայացած Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ) գլխավոր ասամբլեայում, որտեղ տարբեր երկրներից ներկա էին 10-ից ավելի հայ աստղագետներ, քննարկվել է հայկական աստղագիտական միություն կամ ընկերություն ստեղծելու հարցը: Սակայն ինչ-ինչ պատճառներով ընկերությունը չի ստեղծվել: Այնպես որ, որոշ առումով, սա Համբարձումյանի երազանքի իրականացումն էր: Արդեն 1990-ականներին գաղափարի իրականացմանը

մեծապես նպաստեց նաև մեր ամերիկահայ ճանաչված աստղագետ պրոֆ. Երվանդ Թերզյանը:

✚ Որո՞նք են ՀԱԸ-ի գործունեության հիմնական ոլորտները:

Կարելի է նշել հետևյալը.

- Հայ աստղագետների միջավայրում տեղեկատվական դաշտի ապահովումը՝ մասնավորապես կայքէջի միջոցով, էլեկտրոնային տեղեկագրերի տարածումը հայ աստղագետներին և այլն,
- Տարեկան գիտաժողովները, որոնք նույնպես ակտիվություն առաջացրեցին Բյուրականի աստղադիտարանում, քանի որ նախկինում՝ հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո, շատ քիչ էին գիտական միջոցառումները,
- Երիտասարդ աստղագետների տարեկան մրցանակները: Արդեն իսկ բազմաթիվ ակտիվ երիտասարդներ ստացել են մրցանակներ,
- Մի շարք կրթական ծրագրերը՝ ամառային դպրոցներ, դպրոցական դասախոսությունների ծրագիր, գիտաճամբարներ և այլն,
- Միրոդ աստղագետների հետ համագործակցությունը,
- Հանրամատչելի ծրագրերը:

✚ Հայտնի է, որ ամեն տարի երիտասարդ աստղագետները ՀԱԸ-ի կողմից արժանանում են մրցանակների: Ի՞նչն էք հաշվի առնում ընտրությունը կատարելիս:

Հիմնականում հաշվի են առնվում գիտական արդյունքները՝ գիտական հոդվածները, գիտաժողովների զեկուցումները, սեմինարների իրականացումը, գործուղումները, դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, ինչպես նաև կազմակերպչական գործունեությունը, օրինակ՝ Բյուրականում ամառային դպրոցի կազմակերպում և այլն: 2004-2018 ընթացքում ՀԱԸ-ի տարեկան մրցանակի է արժանացել 15 երիտասարդ, մի քանիսը՝ 2-ական անգամ: Տարեկան մրցանակը երբեմն կիսվել է երկու հոգու միջև: Երեք անգամ մրցանակակիրները

ներկայացրել են արտասահմանյան գիտական հաստատություններ Ֆրանսիայից, Պորտուգալիայից և Իտալիայից:

✚ Քանի՞ անդամ ունի ՀԱԸ-ը ներկայումս:

Ներկայումս ունենք ուղիղ 100 անդամ: Հետաքրքիր է, որ ի տարբերություն



այլ աստղագիտական ընկերությունների՝ ՀԱԸ-ի կազմում կան աստղագետներ մի շարք այլ երկրներից՝ մասնավորապես ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ռուսաստանից և այլն: Անդամների ուղիղ կեսն արտասահմանից են: ՀԱԸ-ի հեղինակությունն այնքան է աճել, որ բացի հայազգի գիտնականներից անդամագրվել են նաև այլ ազգերի գիտնականներ:

Արեգ Միքայելյան

Իհարկե, զգալի քանակը Բյուրականի աստղադիտարանից է, սակայն ունենք նաև Հայաստանի մի քանի այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ԵՊՀ, Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) և այլ:

✚ Ինչպե՞ս կարելի է անդամակցել այս ընկերությանը:

ՀԱԸ պրոֆեսիոնալ աստղագետների համար է, սակայն բացառության կարգով հայ աստղադիտությանը մեծ ծառայություններ մատուցած անձանց կարող ենք հրավիրել անդամակցելու մեր ընկերությանը: Ընկերությանը կարող են անդամակցել ցանկացած ազգության պրոֆեսիոնալ աստղագետներ:

Անդամակցության հայտը կարող են լրացնել առցանց՝ <https://www.aras.am//>

✚ Արդյոք 2019թ.-ին նախատեսվո՞ւմ է որևէ խոշոր գիտական իրադարձություն:

Այս տարի, ինչպես և ամեն տարի, մեր երիտասարդական դպրոցների և գիտաժողովների ամիսը սեպտեմբերն է, քանի որ մեր գլխավոր

իրադարձություններն արդեն ավանդաբար կապում ենք Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրվա՝ սեպտեմբերի 18-ի հետ: Ունենալու ենք տարածաշրջանային դպրոց երիտասարդ մասնագետների համար, այս անգամ տիեզերական հետազոտությունների և տեխնոլոգիաների թեմայով, ինչով փորձում ենք Հայաստանը դարձնել այդ ոլորտում տարածաշրջանի առաջատարը: Այնուհետև լինելու է մեր լավագույն աստղագետներից մեկի՝ Մարատ Առաքելյանի ծննդյան 90-րդ տարեդարձին նվիրված գիտաժողով «Քվազարներ և ակտիվ գալակտիկաներ» թեմայով:

✚ Ի՞նչ միջազգային կազմակերպությունների հետ եք համագործակցում:

ՀԱԸ համագործակցում է Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ) և մի շարք այլ աստղագիտական ընկերությունների հետ, պաշտոնապես անդամագրվել է Եվրոպական աստղագիտական ընկերությանը (ԵԱԸ) և հանդիսանում է դրա 26 անդամ-ընկերություններից մեկը: ՀԱԸ Հայաստանում ներդրել է Գալիլեյան ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը (Galileo Teachers Training Program, GTTP): Աստղագիտական միջազգային օլիմպիադաներում Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչն է: Հայաստանում ներկայացնում է նաև Եվրասիական աստղագիտական ընկերությունը (ԵԱԱԸ, EAAS):

Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը